չան չէ անկասկած ու չէ սպասում ի համար։ Գրքոյկների էջերը մեծամասնությունն են, սովորական մրջին մեծությունից քիչ աւելի։ Թուղթը ընտիր, կազմերը սեպ, ամուր։ արտաքինը գեղեցիկ։ գրաւիչ։ Այդ գրքոյկների տարածելը, մանաւանդ մեր ծխական դպրոցներում. շատ ցանկալի է։

Ստ Տ.. Ա.ևոտիքեան

ԳՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՐԱԽՕՍԱՏԱՆ

Բժ Ա. Բուզուզեան. գրաւարան հայկական տպագրութեան 400 և տառերի գիւտի 1500 ամեայ յոբելեանի յիշատակին. ա գրքոյկ – Կոչած տարը և ոսկէ կուրքի գնդեր, 98 էջ, գինը 20 կոպ., բ. գրքոյկ—Փոքրիկ պատմածներ, 90 էջ, գինը 20 կ., գ. գրքոյկ—Երեք պատմածք, 98 էջ, գինը 20 կոպ.. դ. գրքոյկ—Գոբիլա և ուրիշ պատմածքներ, 95 էջ, գինը 20 կ., ե. գրքոյկ—Անտառի գազանները և ուրիշ պատմածքներ, 95 էջ, գինը 20 կ., Թիֆլիս, տպարան Հնոյտատրա ընկ. 1913 թ.

Բժշկապետ Արտաշէս Բուզուզեանը, որը լաւ ծանօթ է մեր հասարակութեան իր հանրամատչելի գիտական հեղինակութիւններով և հրատարակութիւններով, ոլոր իր այդ համակրելի գործունէութեամբ մեր գրական ասպարէզին է մտած 90-ական թուականների վերջերից արդէն, համազգային ոգեղ ուրիշով մեռնարկել է մի շատ համակրելի գործ եւ. որոշել է իր սեփական միջոցներով հրատարակել հասարատչելի ընթերցանութեան համար տասներկու գրքոյկ, իւրաքանչիւրը երեք տպագրական թերթի ծաւալով ու արժէքով 20 կոպէկ հասը։ նուիրած, ինչպէս մատնանշած է հրատարակած գրքոյկների կազմի վրայ, հայկական տպագրութեան 400 և տառերի գիւտի 1500-ամեայ յոբելեանի յիշատակին։ Գրքոյկներից հինգը, վերև մատնանշածները, լոյս են տեսել արդէն։ Առաջին գրքոյկում կայ քսան պատմածք, երկրորդում տասնեհինգ, երրորդում երեք, չորրորդում տասնվեց, հինգերորդում տասնեչորս։ Պատմածքները օտարազգի հեղինակներից են (Մայն-Ռիդից, Պարնից, Գերվուխինից, Մակ-Դոնալդից, Լուի Բուսենարից և ուրիշներից, պատանեկական գրողներից մեծ մասամբ)։ Ընտրութիւններն անպայման ազդող են, արւած հմուտ ձեռքով ու թարգմանուած խնամքով։ Գրքոյկները մանդամայն մատչելի են մանկական-պատանեկական ընթերցանութեան համար թէ իրենց բովանդակութեամբ և թէ լեզուով. ընթերցանութեան լաւ նիւթ կարող են ծառայել սկսած ուսուցման երրորդ տարուց, ծխական դպրոցների երրորդ բաժանմունքից. առհասարակ ընթերցանութեան շատ լաւ գրքեր են տարրական կրթութիւն ստացած բոլոր գրագէտների համար։ Պատմածքները մեծ մասամբ ոգեպիսիներից են, որոնք այլ և այլ գիտելիքներ են մատակարարում բնապատմական աշխարհից, պարզաբանում բացատրում են բնութեան պէս-պէս երեւոյթները, հասկացողութիւն են տալիս երկրագնդի այլ և այլ մասերում ապրող մարդկանց ցեղային առանձնայատկութիւնների, վարք ու բարքի և կենցաղի մասին և այդ բոլորը ոչ թէ չոր ու ցամաք, անհրապոյր ձեւով, այլ հետաքրքրական պատմածքների մէջ ամփոփած՝ ինչպէս արել է, օրինակ, Մայն-Ռիդը, բոլոր երկրների պատասեկութիւնից սիրուած այդ գրողը։

Հրատարակելիք գրքոյկներն էլ անկասկած նոյնպիսի ճոխ ու բազմապիսի բովանդակութիւն կունենան. Նրանք էլ, ինչպէս լսել ենք, պարբերաբար կը հրատարակուեն մինչև առաջիկայ յուլիսը։

Գրքոյկներից զոյանալիք նիւթական արդիւնքը, առանց ծախսերը նրանից հանելու, յատկացուելու են ըստ մեր լսածի մեր կուլտուրական հաստատութիւններին, զուլէ և դպրոցական կամ գրական ֆոնդին. դեռ վերջնականապէս այդ չէ որոշել պ. Բուզուզեանը, որը այդ, ինչպէս և իր նախկին հրատարակութիւններից, ոչ մի նիւթական